**ԺԻՐԱՅՐ ՂԱՐԱԳՅՈԶՅԱՆ**
Հայ-ռուսական (սլավոնական) համալսարանի իրավունքի
և քաղաքականության ինստիտուտի քրեական իրավունքի
և քրեական դատավարության ամբիոնի հայցորդ



# ԹՄՐԱՄԻՋՈՑՆԵՐԻ ԱՊՕՐԻՆԻ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Սույն հոդվածում կանդրադառնանք տվյալ հանցագործությունների վիկտոմոլոգիական կողմերին և դրա հետ կապված, հիմնվելով սոցիալ-հոգեբանական վերլուծության արդյունքների ու վիճակագրական տվյալների վրա, կանգ կառնենք թմրամիջոցների ապօրինի շրջանառության ոլորտի հանցագործությունների կանխարգելման ստացված արդյունքների դերի վրա: Բացահայտելով թմրահանցագործությունների կանխարգելման արդյունավետ միջոցները՝ ներկայացնենք դրանց հետագա զարգացման առումով հստակ առաջարկներ Հայաստանի Հանրապետության ներկայիս պայմանների համաձայն:

***Հիմնարար բառեր***- թմրամիջոցներ, թմրամոլություն, թմրամիջոցների ապօրինի շրջանառություն, կանխարգելում:

Թմրամիջոցների ապօրինի շրջանառության ոլորտի հանցագործությունների կանխարգելումը սոցիալական, կրթական, բժշկահոգեբանական միջոցառումների ամբողջություն է, որն ուղղված է թմրամիջոցների կամ հոգեմետ նյութերի գործածման և տարածման պահանջների ու պայմանների բացահայտմանը, ինչպես նաև թմրամիջոցների ու հոգեմետ նյութերի չարաշահման արդյունքում դրանց սոցիալական, բժշկական ու անձնական հետևանքների, նախազգուշական ու լիկվիդացիոն գործողությունների իրականացմանը (լքվածություն, անպատասխանատվություն, հանցավորություն, ՄԻԱՎ-ի, հեպատիտի ու սեռական ճանապարհով տարածվող հիվանդությունների դեպքերի աճ և այլն)[1]:

Պատմական զարգացման ընթացքում հանցավոր հարձակումների դեմ մարդկությունը օգտագործել է երկու հիմնական միջոց՝ կատարված հանցագործության համար պատժում և նախազգուշացում: Բայց, չնայած պատժի անխուսափելիության անժխտելի նշանակության մեծացմանը, մարդկային քաղաքակրթության զարգացման ընթացքում ավելի ու ավելի ամրապնդվեց այն գիտակցումը, որ հենց հանցագործությունների նախազգուշացումն է համարվում հանցավոր ոտնձգությունների, մասնավորապես՝ թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարի առավել հեռանկարային միջոց:

ՀՀ «Ոստիկանության մասին» օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ կետում նշվում է, որ նախականխումը, կանխումն ու խափանումը համարվում են ոստիկանության մարմինների հիմնական խնդիրներից: Միաժամանակ, պետք է նշել, որ տվյալ հանցագործությունների կանխարգելումը ամբողջ հասարակության ու պետական բոլոր մարմինների խնդիրն է, որը լուծվում է զանազան ոստիկանական, տնտեսական, իրավական ու այլ մեթոդներով, որոնք հատկապես ուղղված են հանցագործության պատճառների և դրանց կատարմանը նպաստող գործոնների բացահայտմանը:

Հայաստանի Հանրապետությունում քրեածին իրավիճակի զարգացման առանձնահատկությունները, այդ թվում՝ թմրամիջոցների ապօրինի շրջանառության հետ կապված, կախված են մի շարք նեգատիվ սոցիալական և սոցիալապես նշանավոր երևույթների ու պրոցեսների հետ: Թմրահանցավորությունը ենթարկվում է մի շարք գործոնների օբյեկտիվ ու սուբյեկտիվ հատկությունների ազդեցությանը և զարգացում է ապրում համաձայն օբյեկտիվ օրինաչափությունների, քանի որ, լինելով նեգատիվ սոցիալական երևույթ, ենթարկվում է այն նույն փոփոխություններին, ինչ ամբողջ հասարակությունը: Հանցավորության աճի գործոնները կարելի է դասակարգել այսպես՝ ա) օբյեկտիվ կամ արտաքին քրեածին գործոններ, բ) սուբյեկտիվ կամ ներքին քրեածին գործոններ:

Արտաքին քրեածին դետերմինանտներից են

www.lawinstitute.am

տնտեսական, սոցիալ-քաղաքական, իրավական, կազմակերպչական, սոցիալ-հոգեբանական, տեխնիկական, բժշկասոցիալական, բնապահպանական և մի շարք այլ գործոնները: Հանցավորության ներքին գործոնները կազմում են քրեական ռեցիդիվիզմը, պրոֆեսիոնալիզմը, քրեական կազմակերպվածությունը, վերածնվող քրեական ավանդույթները, ինչպես նաև պատիժ կրած անձանց օրինապահ միջավայր վերադարձնելու սոցիալ-քրեաբանական խնդիրները[2]:

Հանցավորության դոկտրինայում գոյություն ունեն մի քանի գիտական մոտեցումներ՝ կապված հանցավորության պատճառների հետազոտման հետ: Հանցավորության պատճառներն ու պայմանները միավորում է «քրեածին դետերմինանտներ» տեսակային հասկացությունը[3]: Հասարակական կյանքի այն երևույթները, որոնք ծնում են հանցավորություն, աջակցում են հանցավորության գոյությանը, առաջացնում են դրա աճը կամ անկումը, հանդիսանում են հանցավորության պատճառներ: Ի տարբերություն պատճառների՝ հանցագործություններ կատարելուն նպաստող պայմանները բնական, սոցիալական կամ տեխնիկական գործոններն են, որոնք ինքնին չեն ծնում նշված երևույթ, սակայն օգնում են դրա իրացմանը, իրականացմանը[4]: Սակայն, ինչպես թվում է, թմրահանցավորության պատճառային համալիրը հետազոտելիս անհրաժեշտ է տարբերակել թմրահանցագործությունների պատճառների ու պայմանների հիմնախնդիրը թմրահանցագործությունների վիճակի, դինամիկայի կամ կառուցվածքի փոփոխության պատճառների խնդիրներից[5]: Որպես կանոն, երևույթների ցուցանիշներում տարբերություններ առաջացնող գործոնները դեռ հենց այդ երևույթների պատճառները չեն, թեպետ նրանք կարող են գտնվել փոխադարձ կապի մեջ[6]: Դիտարկվող տեսակի հանցարարության ցուցանիշներում փոփոխությունների պատճառները ոչ միշտ են հանդիսանում այդ հանցագործությունների դետերմինանտներ, քանի որ երբեմն այդ փոփոխությունները գոյանում են ուղեկցվող գործոններից (օրինակ՝ հանցավոր խմբերի ազդեցության վերաբաշխում որոշակի տարածաշրջանում, թմրամոլության կտրուկ աճ աշնանը կամ գարնանը՝ կապված գործածող անձանց մոտ սրմամբ և այլն):

Թմրամիջոցների ապօրինի շրջանառության հետ կապված նախազգուշացումները գործողությունների ու միջոցների բազմամակարդակ համակարգ է, որն իրականացվում է համապատասխան սուբյեկտների կողմից, որոնք ուղղված են.

ա) տվյալ տեսակի հանցավորության ու նրա առանձին տեսակների պատճառների ու դրան նպաստող գործոնների բացահայտմանը, սահմանմանն ու չեզոքացմանը: Հայաստանի պայմաններում դա նախ և առաջ բնակչության ցածր կենսամակարդակն է, աշխատատեղերի անբավարար քանակը, երիտասարդների շրջանում ժամանցի կազմակերպման հասանելի խթանիչ նախաձեռնությունների բացակայությունը, տեղական ինքնակառավարման մարմինների, ուսումնական հաստատությունների և այլ հիմնարկների կողմից միջին մասնագիտական հաստատությունների մեծամասնության փակումը: Հատկապես իրավիճակը էլ ավելի է բարդանում հանրապետության մի շարք մարզերում, որտեղ տնտեսական ճգնաժամը ստացել է ավելի նկատելի տեսք: Եվ, եթե երկրի կենտրոնական շրջաններում նկատվում են տնտեսական զարգացման ու հասարակական կյանքի բարելավման տեղաշարժեր, ապա մնացյալ ոչ կենտրոնական շրջաններում գործող իրավիճակը նույնիսկ սոցիալ-տնտեսական նորմալ պայմաններ կոչվելուց շատ հեռու է,

բ) որոշակի տարածաշրջաններում ու միջավայրերում հանցագործությունների կատարմանը նպաստող և խթանող գործոնների պարզմանը և վերացմանը: ՀՀ ոստիկանության մարմինների իրավապահ գործունեության մեջ առկա է հետևյալ տեսակի նախազգուշական միջոցառումների իրականացում՝ ազատազրկման վայրերում պատիժ կրած անձանց նկատմամբ հատուկ հսկողության սահմանում, մասնավորապես թմրամիջոցների ապօրինի շրջանառության հետ կապված հանցագործություններում մեղադրված անձանց նկատմամբ հսկողության իրականացում, վայրի բույսերի ու դրանց ապօրինի մշակման բացահայտմանն ու ոչնչացմանն ուղղված միջոցառումներ,

գ) հասարակության մեջ հանցավորության բարձր ռիսկեր պարունակող խմբերի բացահայտմանն ու այդ ռիսկերի նվազեցմանը: Տվյալ դեպքում ռիսկային խմբեր են համարվում ԲՈՒՀ-երի ու միջին մասնագիտական հաստատությունների ուսանողները, որոնց շրջանում ինչպես դասախոսների, այնպես էլ ՀՀ ոստիկանության աշխատակիցների կողմից իրականացվում են նախազգուշական մի-

www.lawinstitute.am

ջոցառումներ,

դ) որոշակի կատեգորիայի մարդկանց բացահայտմանը, որոնց վարքագիծը վկայում է իրական հնարավոր հանցագործություններ կատարելու մասին, ինչպես նաև նրանց նկատմամբ կարգավորիչ ու զսպիչ գործողությունների կիրառում, որը որոշ դեպքերում կարող է կիրառվել նաև նրանց մոտակա միջավայրի վրա:

Թմրամիջոցների ապօրինի շրջանառության ոլորտում կանխարգելիչ գործողությունները իրականացվում են երկու ուղղությամբ՝ պահանջարկի նվազեցում և առաջարկի նվազեցում:

*Պահանջարկի նվազեցում*

1.**Առաջնային կանխարգելում**: Այս գործունեությունն ուղղված է ապօրինի նյութերի արտադրության ու առևտրի կանխարգելմանը: Առաջնային կանխարգելման օբյեկտ կարող է լինել բնակչությունը, որը թմրանյութեր չի գործածում: Իսկ կանխարգելման սուբյեկտ կարող են լինել ոստիկանությունը, կրթական հաստատությունները, ՁԼՄ-ները, համայքների հոգեբանական կենտրոնները, եկեղեցին: Առավել արդյունավետ կարող են լինել կրթական, հոգեբանական ու դաստիարակչական ծրագրերը:

«*Հոգեբանական*» ծրագիրը (սոցիալ-հոգեբանական կանխարգելումը) կրթական ու բուժական-խարգելիչ հաստատությունների մասնագետների համատեղ գործունեությունն է՝ ուղղված երեխաների ու երիտասարդների մոտ անհատական ռեսուրսների ձևավորմանը, որը նպաստում է առողջ ապրելակերպի, թմրամիջոցների ու հոգեմետ նյութերի գործածումից խուսափելու գաղափարի ձևավորմանը, ինչպես նաև հոգեբանական ունակությունների ձևավորմանը, որոնք կօգնեն թմրամիջոցների ու հոգեմետ նյութերի գործածման հետ կապված կոնֆլիկտային իրավիճակների հարթմանն ու խմբակային ճնշմանը դիմագրավելուն: Ինչպես ցույց են տվել ուսումնասիրությունները, անչափահասների հետ տարվող աշխատանքների արդյունավետությունը հասնում է 60 տոկոսի: Այս աշխատանքը իր մեջ ներառում է՝

ա) ուսուցում՝ ոչ պաշտոնական առաջնորդների (լիդերների) կողմից թմրամիջոցների գործածման դրդման տարբեր իրավիճակների ճանաչում,

բ) ոչ պաշտոնական առաջնորդների ազդեցության հաղթահարում և ՁԼՄ-ների ներգրավում թմրամիջոցների կանխարգելման դեմ պայքարում,

գ) ուսուցանում համախոհների հետ ընկերական հարաբերություններ հաստատելու մասին:

«*Կրթական*» ծրագիրը դաստիարակչական, մանկավարժական մեթոդների վրա հիմնված կրթական հաստատությունների մասնագետների կողմից իրականացվող գործունեությունն է, որն ուղղված է երեխաների ու երիտասարդների մոտ թմրամոլության սոցիալական ու հոգեբանական հետևանքների մասին գիտելիքների ձևավորմանը՝ նպատակ ունենալով ձևավորել հոգեմետ նյութերից ու թմրադեղերից հրաժարման լավագույն այլընտրանքային տարբերակ[7]: Այս ծրագրի արդյունավետությունը կազմում է 40 տոկոս, որը ենթադրում է՝

ա) թմրամիջոցների գործածման և իրացման գործունեության հետևանքների հետ կապված տեղեկատվության տարածում,

բ) անդրադարձ թմրանյութերի գործածման բարոյական ու կրոնական կողմերին,

գ) սպասվող վտանգների մասին դրամատիկ վախի առաջացման ձևավորում:

«*Դաստիարակչական*» ծրագիր, որի արդյունավետությունը կազմում է 30 տոկոս, իր առջև համոզմունքներ է ստեղծում, համաձայն որի՝

ա) թմրամիջոցների գործածումը կապված է կրթության, ինքնահարգանքի ու որոշումների կայացման ցածր մակարդակի հետ,

բ) պետք է գործել սեփական վարքագծի չափանիշներին համապատասխան:

2. **Երկրորդական կանխարգելումը** սոցիալական, կրթական ու բժշկահոգեբանական միջոցառումների ամբողջություն է, որոնց միջոցով զգուշացվում են թմրամոլության ձևավորման ու խորացման հնարավորության մասին թմրամիջոցներ էպիզոդիկ գործածող, բայց հիվանդության ախտանիշները չտեսնող անձինք: Այս դեպքում կանխարգելման օբյեկտ հանդիսանում է թմրամիջոցների գործածման փորձ ունեցող անձը: Իսկ սուբյեկտի դերում հանդես են գալիս ներքին գործերի աշխատակիցները, բժշկական ու հոգեբանական հաստատությունները: Ծրագրի հիմքում ընկած է թմրանյութերի հանդեպ պահանջարկ ունեցողների նույնականացումը և նրանց վարքագծի վրա ներգործումը: Ծրագիրը կարող է ներառել առաջնային բժշկական միջամտություն և դրա հետևողական կիրառում: Թմրամոլությամբ հիվանդ անձի բուժումը կարող է հիմնվել աստիճանական փոփոխության վրա, օգտագործելով ավելի թույլ տոքսիններ

www.lawinstitute.am

(օրինակ՝ հերոինի փոփոխումը մետադոնով): Նմանատիպ բուժում կարող են իրականացնել թերապևտիկ կենտրոնները: Նմանատիպ կլինիկաները, որտեղ թմրամոլները անցնում են խմբակային ու անհատական բուժման կուրսեր, ժամանակի ընթացքում ավելի ու ավելի մեծ տարածում են գտնում Ռուսաստանում: Սակայն որակավորված բուժման կուրսերը հասանելի են միայն քչերին: Երկրի տնտեսական վերականգնումը թույլ է տալիս լրացուցիչ ռեսուրսներ ուղղել այս ոլորտի իրավիճակի բարելավմանը:

**Պահանջարկի նվազեցում**

1. Թմրանյութերի վաճառքով զբաղվող անձանց համար իրական և հավանական ռիսկերի մեծացում:

2. Թմրանյութերի գների հավանական բարձրացում՝ կապված դրանց հասանելիության սահմանափակման հետ:

Ուղիներից մեկը՝ պարեկապահակակետային ծառայության աշխատակիցների պարեկություն: Մեքենաներով և ոտքով հաճախակի պարեկությանը հավելած՝ ոստիկանները իրականացնում են խուզարկումներ ու ստուգումներ, ճանապարհներին ստեղծում են ավտոմեքենաների ստուգման կետեր, խուզարկում են կասկածելի հասատությունները, իրականացնում են ձերբակալումներ հասարակական կարգը խախտելու համար: Այսպիսի կոշտ միջոցները թմրամիջոցների մասին օրենքի խախտման համար, կասկած հարուցող հիմնարկների խուզարկումը տպավորություն են ստեղծում, որ թմրաբիզնեսի մեջ ներգրավվածությունը պարունակում է մեծ ռիսկային տարրեր: Այս իրավիճակը ավելի է խստացվում այն անձանց հետապնդման ծրագրերով, ովքեր ձերբակալվել են թմրանյութերի հետ կապված հանցագործություններ կատարելու համար: Թմրաբիզնեսը, շնորհիվ իրավապահ գործողությունների ու ծրագրերի, ավելի ու ավելի թանկարժեք է դառնում, որը բերում է թմրանյութերի գնի բարձրացման, որի հետևանքով նվազում է դրա առաջարկը:

Այդ միջոցները ուղեկցվում են թմրանյութերի փողոցային մանրածախ վաճառքի դեմ ակտիվ պայքարով: Այն կարող է իրականացվել քաղաքացիական զգեստով ոստիկանության աշխատակիցների կողմից, ինֆորմատորի ցուցումներով կամ ինֆորմացիայի հիմքով խուզարկություն կատարելու միջոցով, որոնք ստացվել են առաջին երկու գործողություններից: Դրանք կարող են վախեցնել պատահական սպառողներին, որոնք ուժեղ կախվածություն չունեն թմրամիջոցներից: Եվ, վերջապես, ոստիկանությունը կարող է տվյալներ հավաքել թմրաբիզնեսով զբաղվող հնարավոր անձանց մասին, որպեսզի պարզի նրանց բնակության վայրը, մատակարարման աղբյուրները, գործերի ղեկավարման եղանակը: Իրավապահ մարմինները պատմականորեն հակված են եղել մեկ իրականացնել կոպիտ քայլեր ընդդեմ թմրադեղերի փողոցային առուծախով զբաղվողների, մեկ երկարատև միջոցառումներ իրականացնել մեծածախ առևտրով զբաղվողների ու դրանց ներմուծողների նկատմամբ: Սակայն թմրաբիզնեսը տարասեռ ու ապակենտրոնացված երևույթ է: Թմրամիջոցների մեծ մասը գալիս է բազմաթիվ տարբեր փոքր խմբերի կողմից, որոնք չունեն ազգային սահմաններ: Բացի այդ, բարձր մակարդակի թմրաբիզնեսի մեջ ներգրավվելը համարվում է շատ ծախսատար, որը պահանջում է մարդկային, ֆինանսական ու ժամանակային ռեսուրսներ, որ սովորաբար չի բերում բավարար քանակի ձերբակալությունների: Այս ամենը հանգեցնում է այն մտքին, որ մեծ քաղաքներում փողոցային թմրավաճառների դեմ ոստիկանների պայքարը ունի մեծ արդյունավետություն: Եվ հենց այս գործողությունները բերում են ձերբակալությունների բարձր մակարդակի: Պետք է նշել, որ թմրավաճառները շատ անկայուն են, և նրանց հեշտ է փոխարինել նորերով: Բայց, ինչևէ, ակտիվ գործողությունները կարող են ազդել գների աճի վրա, ստեղծել անհարմար իրավիճակ՝ պատահական անցորդին դրանք գնելուց զերծ պահելու համար: Բացի այդ, հակաթմրամիջոցային ծրագրերը կարող են դրականորեն անդրադառնալ փողոցային այլ հանցագործությունների ու անկարգությունների վրա: Միանշանակ, իրավապահ մարմինների այլ գործողությունները ևս կարևոր են՝ կապված թմրամիջոցների ապօրինի շրջանառության հետ: Սակայն օբյեկտիվ գործընթացները խանգարում են տվյալ հանցագործության դեմ պայքարին, սահմանափակում են «ձերբակալում, քրեական հետապնդում, դատապարտում» մոդելի արդյունավետությունը: Վրեժխնդրության վտանգը հետ է պահում պոտենցիալ ինֆորմատորներին ու ականատեսներին և ոստիկանության հետ նրանց համագործակցությունը դարձնում վտանգավոր: Բացի այդ, կոռուպցիան իրավապահ մարմինների հա-

www.lawinstitute.am

մար իսկական աղետ է: Թմրաբիզնեսը բնութագրվում է հսկայական կանխիկ գումարների առկայությամբ և քաղաքական գործիչների շրջանում թմրամիջոցների գործածման օրինականացման կողմնակիցների ամենավառ փաստարկն է հանդիսանում այն հանգամանքը, որ թմրաբիզնեսը կոռումպացված ազդեցություն է թողնում ոստիկանության վրա, մասնավորապես երկրի քաղաքական համակարգի վրա:

Գերակա խնդիրների շարքում առավել բարդ խնդիրը կայանում է նրանում, որ պետք է հասնել պետական կառավարման մարմինների և հասարակական կազմակերպությունների աշխատանքի կոորդինացմանը ու համակարգմանը կանխարգելման միջոցներ կազմակերպելիս, որոնք ուղղված են թմրամիջոցների տարածումը նախազգուշացնելու, հակազդելու, հաղթահարելու համար: Այստեղ կարևոր է հաշվի առնել տարբեր շրջաններում թմրանյութերի հետ կապված իրավիճակների բազմազանությունն ու բարդությունը:

Պետք է մասնագետների հետ համաձայնել, որ թմրամոլության դեմ պայքարի ու կանխարգելման գործողություններ իրականացնելիս պետք է հաշվի առնել հետևյալ գործոնները՝ համալիր մոտեցում, ծրագրեր կազմելիս պարտադիր սոցիալական մոնիթորինգ (ընտրված գրանցման համակարգի հիման վրա սահմանված հաճախականությամբ կրկնվող թմրանյութային իրավիճակի զարգացման ցուցանիշների հաշվառում և գնահատում, մասնավորապես թմրամիջոցների ու հոգեմետ նյութերի տարածվածություն, չարաշահման դեպքերի ու կախվածության վիճակի հաճախականություն, առանձին անձանց ու խմբերի վերաբերմունքը թմրամիջոցների ու թմրանյութային վիճակի մասին)[8], ինչպես նաև հաշվի առնել հասարակության առջև սոցիալական պատասխանատվությունը իրականացվող աշխատանքի կապակցությամբ[9]:

Հայաստանի Հանրապետությունում գոյություն չունի թմրամոլների մասին ամբողջական տեղեկատվություն: Տարբեր մասնագետների կարծիքով թմրանյութ գործածող անձանց թիվը կազմում է 30 հազար մարդ, այսինքն՝ բնակչության 1 տոկոսը: Թմրամոլների տոկոսը հանրապետությունում բավական ցածր է՝ համեմատած հարևան երկրների՝ Ադրբեջանի, Վրաստանի, Իրանի Իսլամական Հանրապետության հետ, ինչը բացատրվում է ազգային մենթալիտետով, ինչպես նաև նրանով, որ հայկական ընտանիքներում երեխաների նկատմամբ վերահսկողությունը բավական խիստ է, և, որ ամենակարևորն է, առկա են պետական կոշտ վերահսկողությունն ու թմրանյութերի գործածման նկատմամբ կանխարգելիչ միջոցառումների լայն իրականացումը: Միաժամանակ, այն փաստը, որ, ոչ պաշտոնական տվյալներով, ավելի քան 12 հազար թմրամոլներ համարվում են ուսանողներ, ավելի է սրում իրավիճակը: Ելնելով վերոգրյալից՝ կարելի է ենթադրություն անել, որ թմրամոլության դեմ պայքարը պետք է դառնա պետության ու իրավապահ մարմինների կարևոր խնդիրը, և կանխարգելիչ միջոցառումները առաջին հերթին պետք է իրականացվեն ուսանողների շրջանում: Ինքնին երիտասարդության շրջանում թմրամոլության փաստի առկայությունը բարդացնում է երկրում քրեածին իրավիճակը՝ դրանով իսկ սպառնալով ազգային անվտանգությանը: Չնայած, պաշտոնական տվյալների համաձայն, պատասխանատվության ենթարկված անձանց միայն մեկ տոկոսն է եղել ուսանող, ինչը, մեր կարծիքով, չի համապատասխանում առկա իրական պատկերին[10]: Հայաստանի Հանրապետությունում թմրամոլության ծավալների վերաբերյալ իրական պատկեր գոյություն չունի, քանզի թմրամիջոցների ապօրինի շրջանառության հետ կապված հանցագործությունները խիստ լատենտային են, մինչդեռ այդ խնդրի գոյությունը ակնհայտ է:

Եթե հասարակության զարգացման սոցիալիստական շրջանում շատ գիտնականներ հատուկ ուշադրություն էին դարձնում «արևմուտքի» կործանարար ազդեցությանը (Ա. Ա. Գաբիանի, Լ.Ն Նիկոլաևա), ապա այժմ հնարավոր չէ ուշադրություն չդարձնել հանցավոր կառույցների ներկայացուցիչների քարոզչական գործունեությանը, որոնք ստանում են գերեկամուտներ թմրանյութերի իրացումից: Երիտասարդությունը մշտապես համարվել է հանցավոր կառույցների ուշադրության առարկան: Քարոզչության ռազմավարական նպատակը կայանում է համընդհանուր արժեքների ու վարքագծի կանոնների փոփոխման մեջ:

Թմրամիջոցների գործածման կանխարգելման մեջ մեծ ուշադրություն է դարձվում թմրամոլների հետ կապերի հաստատմանը, նրանց հատուկ օգնության ցուցաբերելուն: Այդ նպատակով ստեղծվում են վերականգնողական կենտրոններ, որտեղ թմրամոլներին ցուցաբերվում է բժշկական,

www.lawinstitute.am

հոգեբանական, մանկավարժական օգնություն, բայց դա ակնհայտորեն բավարար չէ թմրամոլությունն ու բարդույթները հաղթահարելու համար. անհրաժեշտ է նաև աջակցել մասնագիտություն ձեռք բերելու և աշխատանք գտնելու ուղղությամբ, ինչպես նաև ստեղծել հոգեբանական օգնության շուրջօրյա ծառայություն, որոնց աշխատակիցները հեռախոսի կամ անձնական շփման միջոցով կօգնեն բնակչությանը՝ փակուղային իրավիճակներից ելք գտնելու, սթրեսներից ազատվելու, միջոցներ գտնելու այս կամ այն խնդրի հաղթահարման, ինչպես նաև զերծ պահելու նրանց թմրանյութերի միջոցով իրականությունից հեռանալու փորձից:

Անհատական կանխարգելիչ գործունեության արդյունավետությունը բարձրացնելու համար անհրաժեշտ է հենց իր՝ թմրամոլի ներգրավվածությունը՝ հաշվի առնելով նրա կյանքի ու գործունեության և շրջակա միջավայրի պայմանները:

Ընդունված է առանձնացնել անհատական կանխարգելման հետևյալ աստիճանները՝

ա) վաղ կանխարգելում, որի ներքո ընդունված է հասկանալ անձի վրա հակահասարակական ազդեցության աղբյուրների բացահայտումը նախքան այն, որ այդ ազդեցությունը կներազդի նրա վարքագծի վրա: Տվյալ պարագայում առաջնահերթ խնդիրը այդ ազդեցության աղբյուրների հաղթահարումն է ու բացատրումը կանխարգելվող անձին նմանատիպ կապերի վտանգավորությունը,

բ) անմիջական կանխարգելում, որն օգտագործվում է այն դեպքերում, երբ անձի վարքագիծը վկայում է նրա մոտ բացասական հակումների, հանցավոր միջավայրի հետ նրա կապերի մասին: Տվյալ դեպքում խնդիրը այդ անձին հետագա հանցավոր ուղուց հետ պահելն է, որից հետո՝ դաստիարակչական աշխատանքի իրականացումը նրա հետ,

գ) կանխարգելումը հանցավոր վարքի դրսևորման փուլում, որն իրականացվում է անձի՝ բավական խորն արմատներ ունեցող հանցավորության պայմաններում, երբ նրա կողմից կատարված հանցագործությունների ու օրինախախտ գործողությունների քանակը վկայում են հետագայում նրա կողմից նոր հանցագործությունների կատարման մասին: Հետագա հանցագործություններից զերծ պահելու համար նման դեպքերում անհետաձգելի խնդիր է համարվում վերահսկողության ցուցադրական միջոցների կիրառումը և տվյալ անձի նկատմամբ ավելի կոշտ բացատրությունը հանցագործություններ կատարելու իրավական հետևանքների մասին: Միաժամանակ ձեռնարկվում են գործողություններ՝ ձևավորված քրեական միջավայրը ցրելու և պատասխանատվության ենթարկելու նրա առաջնորդներին, գոնե այնպիսի հանցագործությունների համար, ինչպիսիք են թմրամիջոցների գործածման դրդչությունը կամ ներգրավելը, ինչպես նաև անչափահասների ներգրավումը թմրամիջոցների գործածմանը,

դ) ռեցիդիվների կանխարգելում, որի կանխարգելման առանձնահատկությունը կայանում է ներազդման հատուկ օբյեկտների՝ անձանց նկատմամբ, որոնք հանդիսանում են նախկինում քրեական պատասխանատվության ենթարկված նմանատիպ հանցագործություններ կատարելու համար: Տվյալ դեպքում կանխարգելիչ ազդեցության նպատակը նույնն է, ինչ որ նախորդների դեպքում՝ կախված անհատի վարքագծի բնույթից:

Թմրամոլները, ովքեր չեն աշխատում, թմրադեղերի ձեռքբերման աճող ծախսերը հոգալու համար սկսում են գողանալ, ավազակային հարձակումներ կամ կողոպուտներ կատարել, խարդախությամբ զբաղվել կամ այլ շահադիտական հանցագործություններ անել: Հանցագործության են գնում նաև այն թմրամոլները, ովքեր աշխատում են, քանի որ վաստակած գումարը չի բավականացնում՝ թմրանյութեր ու համապատասխան հումք ձեռք բերելու և այն պատրաստելու համար:

Հարկ է նշել, որ ԽՍՀՄ-ի փլուզման արդյունքում խորացավ ժամանցային վայրերի ճգնաժամի հարցը: Նկատվում է գոյություն ունեցող ակումբների նյութական բազայի բավական ցածր մակարդակ: Նրանց մեծ մասը զինված չեն դեռահասների հետ զբաղվելու պարագաներով, վերջին տարիներին համարյա չեն հատկացվում նյութական միջոցներ, և որոշներն էլ գտնվում են անբարեկարգ վիճակում: Բացի այդ, չի իրականացվում «շեղվող» վարք ունեցող դեռահասների ներգրավումը այդ ակումբներում կամ խմբակներում:

Այս ամենը իրականացնելու համար անհրաժեշտ է միավորել ու կոորդինացնել տեղական ինքնակառավարման մարմինների, մշակութային կառույցների, կրթական հաստատությունների, ձեռնարկությունների, սպորտային, երիտասարդական և այլ հասարակական կազմակերպությունների աշխատանքները: Բացի այդ, կարևոր նշանակու-

թյուն ունի տարբերակված մոտեցման ցուցաբերումը՝ հաշվի առնելով դեռահասների հետաքրքրությունները ու պահանջարկը, կախված իրենց սեռից՝ ընտրել համապատասխան աշխատանքի տեսակը հանրապետության տարբեր շրջաններում՝ստեղծելով տարբեր խմբեր ու բաժիններ:

Վերը նշվածից զատ հեղինակը գտնում է, որ անհրաժեշտ է կրթական հաստատություններում և ՀՀ պաշտպանության նախարարության զինվորական ստորաբաժանումներում ավելացնել հոգեբանների քանակը, որոնց հիմնական խնդիրը կլիներ երիտասարդներին ծանոթացնել թմրանյութային կախվածության հետևանքներին: Ակնհայտ է, որ կանխարգելիչ միջոցառումներ իրականացնելիս համապատասխան կրթություն ունեցող անձինք (հոգեբանները) ունեն ավելի մեծ հնարավորություններ ցանկալի արդյունքի հասնելու համար, և երիտասարդների հետ մշտական կապի շնորհիվ կարող են ըմբռնել վարքագծի ու հոգեվիճակի այն մանրուքները, որոնք սովորաբար դուրս են մնում ծնողների տեսադաշտից:

Թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարի առկա փորձը ցույց է տալիս , որ այս երևույթի վերաբերյալ տեսական կոնցեպցիան այնքան էլ հստակ չէ: Մենք կարծում ենք, որ անհրաժեշտություն է առաջացել թմրամոլության հետ առնչություն ունեցող անձանց բացահայտման նոր, ավելի հստակ ու արդյունավետ համակարգի մշակման: Տվյալ դեպքում առնչություն ասելով՝ նկատի ունենք այն, ինչը դուրս է գալիս քրեական պատժողական արարքի շրջանակներից և որոշվում է գործածողների, իրացնողների, գնորդների միջև կապով: Դա կնպաստի թմրամոլության ու թմրամիջոցների հետ կապված հանցագործությունների մեջ ներգրված անձանց բացահայտմանը վաղ շրջանում՝ հատկապես երիտասարդների շրջանում: Միանգամայն պարզ է, որ թմրանյութերից կախվածություն ունեցող անձանց բացահայտումը վաղ շրջանում զգալի կավելացնի տվյալ անձի բուժման հնարավորությունը, քան այն թմրամոլի, ով արդեն տառապում է այդ հիվանդությամբ:

Համաձայն «Հիմնական կազմակերպական միջոցառումների» մասին կազմված պլանի և ՀՀ ոստիկանության ղեկավարության հրամանի՝ իրականացվում է ամենամյա «Կանեփ - Կակաչ» միջոցառումը: Այդ միջոցառումը իրականացվում է ոստիկանության ուժերի, պաշտպանության նախարարության, տեղական ինքնակառավարման մարմինների կողմից՝ ներառելով ողջ հանրապետության տարածքը: Այդ միջոցառման նպատակն է վայրի և ապօրինի աճեցված թմրեցնող հատկություններ պարունակող բույսերի՝ կանեփի ու կակաչի բացահայտումն ու ոչնչացումը: Շնորհիվ նման միջոցառման, տարեցտարի կրճատվում են այդ բույսերի առգրավման քանակային ցուցանիշները:

Տվյալ կանխարգելիչ միջոցառումը համարվում է ոստիկանության մարմինների և այլ պետական կառավարման մարմինների համագործակցության լավագույն օրինակը հանցավորության, մասնավորապես՝ թմրանյութերի դեմ պայքարում:

Իրականացնելով հետազոտություն թմրամիջոցների և հոգեմետ նյութերի ապօրինի շրջանառության կանխարգելման ոլորտում՝ հեղինակը եկավ հետևյալ եզրահանգումներին՝

• տվյալ ոլորտի հանցագործությունների առյուծի բաժինը իրականացվում է մշտական եկամուտ չունեցող անձանց կողմից, և, հետևապես պետությունը պետք է զբաղվի այս կատեգորիայի մարդկանց զբաղվածության հարցը լուծելով,

• անհրաժեշտություն է առաջացել մշակել թմրամոլության հետ առնչվող անձանց բացահայտման նոր, ավելի հստակ ու արդյունավետ համակարգ՝ օգտագործելով տեղեկատվական-տրամաբանական և տվյալների միասնական բազա,

• տարեցտարի կրճատվում է վայրի և աճեցված թմրեցնող հատկություն ունեցող բույսերի քանակը, ինչը վկայում է «Կանեփ-կակաչ» կանխարգելիչ միջոցառման արդյունավետության և դրանց առաջնային նշանակության մասին թմրամիջոցների ապօրինի շրջանառության ոլորտում,

• անհրաժեշտ է ներգրավել կանխարգելիչ գործունեության մեջ մանկավարժներին ու հոգեբաններին ԲՈՒՀ-երում, ինչպես նաև ՀՀ պաշտպանության նախարարության զինվորական ստորաբաժանումներում,

• տեղական ինքնակառավարման մարմինները պետք է ուշադրություն դարձնեն դեռահասների համար հասանելի հաստատությունների ստեղծմանը՝ առանձնացնելով լրացուցիչ միջոցներ սպորտային սեկցիաների զարգացման համար:

www.lawinstitute.am

[1] Տե՛ս Основы профилактики наркомании у несовершеннолетних. - СПб.: Изд-во Образование-культура, 2003.
[2] Տե՛ս Криминология: Учебник для вузов / Под общ. ред. д.ю.н. проф. А. И. Долговой. М.: Норма, 2005. С. 95.
[3] Տե՛ս Криминология: Учебник / Под ред. Н. Ф. Кузнецовой, Г. М. Миньковского. М., 1994. С. 7.
[4] Տե՛ս Криминология: Учебник / Под ред. В. Н. Кудрявцева и В. Е. Эминова. 3 -е изд. М., 2005. С. 123.
[5] Տե՛ս Российское уголовное право: Курс лекций / Под. ред. А. И. Коробеева. Владивосток, 1999. С. 297.
[6] Տե՛ս Дагель П. С. Социальные отклонения. М., 1984. С. 130.
[7] Տե՛ս Основы профилактики наркомании у несовершеннолетних. - СПб.: Изд-во Образование-культура, 2003г.
[8] Տե՛ս В.В. Лошакарев, Наркомания как правовая категория, Право и Политика, 2008г., ст. 450.
[9] Տե՛ս Потемкина Т. Только вместе // Нарконет. Россия без наркотиков. 2002. N 1-2 (14). С. 88.
[10] Տե՛ս ՀՀ ոստիկանության պաշտոնական կայքէջ, www.police.am

**Жирайр Карагезян**
Соискатель кафедры уголовного права и
уголовно-процессуального права института права
и политики Российско-Армянского (Славянского) университета

**РЕЗЮМЕ**

***Профилактика незаконного оборота наркотических средств в Республике Армения***

В данной статье сосредоточимся на виктимологических аспектах данных преступлений и в этой связи, опираясь на результаты социолого-психологического анализа и статистических данных, остановимся на роли полученных результатов в профилактике преступлений в сфере незаконного оборота наркотических средств. Раскрывая эффективность мер профилактики наркопреступлений, внести конкретные предложения в плане их дальнейшего развития в соответствии с нынешними условиями Республики Армения.

***Ключевые слова:*** наркотические средства, наркомания, незаконный оборот наркотических средств, профилактика

**Zhirayr Karagezyan**
An applicant of the Chair of Criminal Law and
Criminal Procedural Law of the Institute of Law and
Policy of the Russian-Armenian (Slavonic) University

**SUMMARY**

***Prevention of illegal trafficking of narcotic drugs in the Republic of Armenia***

This article will concentrate on aspects of the victimization of these crimes and in this regard, based on the results of sociological and psychological analysis and statistical description of the role of the results in the prevention of crime in the field of illegal drug trafficking. Revealing the effectiveness of the prevention of drug crimes, to make concrete proposals in terms of their development in accordance with the current terms of the Republic of Armenia.

***Keywords:*** narcotic drugs, addiction, illegal drug trafficking, prevention